Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

aravotdaily
# Առավոտ

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

24/4120/ 10 փետրվարի 2012 ուրբաթ

ISSN 1829-2224

## Ա

## Կենաց-մահու կռիվ չէ

Կիրակի օրը Ստեփանավանում եւ Հրազդանում տեղի են ունենալու քաղաքապետի ընտրություններ: Հետաքրքիր է լինելու Հրազդանում, որտեղ ՀԱԿ-ը դրել է ուժեղ թեկնածուի՝ ազատամարտիկ Սասուն Միքայելյանին: Նա փորձելու է, կիրառելով կոնգրեսական եզրաբանությունը, «ճեղքել քրեաօլիգարխիկ բուրգը»: Վերջին բառակապակցությունը, թերեւս, ճիշտ է, սակայն չեմ կարող չնկատել, որ ընդամենը 4 տարի առաջ պարոն Միքայելյանը այդ նույն «բուրգի» ներկայացուցիչն էր: Բայց Հայաստանում ընդդիմադիրների մեծ մասը նախկինում իշխանության մեջ էր, սակայն նրանք գտնում են, որ այդ ժամանակաշրջանում իրենց դրսեւորել են որպես կատարյալ հրեշտակներ: Դե, դա ոչ միայն հայաստանյան հիվանդություն է:

Կարծում եմ՝ Հայաստանում մի բան կփոխվի այն ժամանակ, երբ ընտրությունները, առավել եւս՝ տեղական ինքնակառավարման մարմինների, կդադարեն կենաց-մահու պայքարի ասպարեզ լինել: Օրինակ՝ տվյալ դեպքում Կոտայքի մարզպետը, իր անմիջական պարտականությունները թողած, լծվել է այդ պայքարին եւ իր պատվի ու, հավանաբար, հետագա պաշտոնավարության հարց է համարում Հրազդանի գործող քաղաքապետին կրկին իր պաշտոնում «անցկացնելը»: Այդպես չպիտի լինի՝ կառավարության կողմից նշանակված պաշտոնյան իր գործառույթներն ունի, քաղաքի կամ գյուղի բնակիչների կողմից ընտրված համայնքապետերը՝ իրենց: ՀՀԿ-ն եւ ՀԱԿ-ը Հրազդանի քաղաքապետի ընտրությունները դիտում են որպես «գլխավոր ճակատամարտի»՝ ԱԺ ընտրություններից առաջ, ամենավերջին փորձը՝ յուրահատուկ primaries, որտեղ ճշտվելու է ուժերի ներկայիս դասավորությունը: Դա բացարձակապես այդպես չէ. քաղաքապետը կուսակցական կռիվների հետ, իմ կարծիքով, չպիտի կապ ունենա: Այդ առիթով հիշեցի ավելի քան 10 տարի առաջ ֆիննական Լահտի քաղաքից ստացած իմ տպավորությունը: Սովորական ճաշարանում մեր հետեւից՝ սկուտեղը ձեռքին, կանգնած էր «սվիտերով» մի մարդ եւ համբերատար սպասում էր, թե երբ է մոտենալու դրամարկղին: Ոչ ոք նրա վրա ուշադրություն չէր դարձնում, կողքը ոչ մի նազիր-վեզիր, առավել եւս՝ թիկնապահ չէր պտտվում: Ֆինն գործընկերները մեզ բացատրեցին, որ նա Լահտիի քաղաքապետն է: Այսինքն՝ մի մարդ է, որը մի քանի տարի պիտի հոգա իր համաքաղաքացիների կենցաղային հոգսերը, իսկ հետո գնա իր գործին: Եթե նման մտածելակերպով ես մոտենում պաշտոնին, ապա ընտրություններում պարտվելը եւ աթոռը ուրիշին զիջելը բացարձակապես ողբերգություն չէ: Մյուս կողմից էլ՝ ընտրվելն էլ «բուրգ ճեղքել» չէ, ընդամենը իր համաքաղաքացիների որոշակի բեռը իր վրա վերցնել է:

Հիմա ինձ համար կարեւո՞ր է, թե որտեղից է Երեւանի քաղաքապետը՝ ՀՀԿ-ի՞ց, թե՞, ասենք, Մարքսիստական կուսակցությունից: Ինձ համար կարեւոր է, որ նա այս եղանակին փողոցներում աղ ու ավազ ցանի: Ցավոք, դա բավարար չափով չի արվում մայրաքաղաքում: Պատկերացնում եմ, թե ինչպիսին է վիճակը Հրազդանում:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# Դարձան ԵԺԿ անդամներ

Երեկ երեկոյան Բրյուսելում Եվրոպական ժողովրդական կուսակցության համաժողովի ժամանակ քննարկվեց եւ ընդունվեց հայաստանյան երեք կուսակցությունների՝ Հանրապետականի, «Ժառանգության» եւ «Օրինաց երկրի» անդամակցությունը այդ կուսակցությանը: Հայաստանյան երեք կուսակցությունների ներկայացուցիչները ստորագրել են համատեղ հուշագիր, որում հաստատել են իրենց պատրաստակամությունը հավատարիմ մնալու եվրոպական ժողովրդավարական արժեքներին՝ Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ իրավական համակարգերի բարեփոխման եւ զարգացման ընթացքում: Հիշեցնենք, որ ԵԺԿ նախագահ Վիլֆրիդ Մարթենսը (լուսանկարում) ԵԺԿ 20-րդ կոնգրեսի լիագումար նիստին որպես պատվավոր հյուր մասնակցող ՀՀ նախագահին, հանձնել էր ԵԺԿ-ի կրծքանշանը, ասելով. «Հայաստանում ավանդույթը թելադրում է հպարտությամբ կրել կուսակցական կրծքանշանը, որն արտացոլում է նվիրվածությունն այդ կրծքանշանը խորհրդանշող արժեքներին»:



## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Արտահերթով թող անցկացնեն

«Երբ նույն կառավարությանը, նույն մեծամասնությանը անհրաժեշտ է լինում որեւէ օրենք անցկացնել շտապ, բերվում է եւ արտահերթ ռեժիմով անցկացվում է, իսկ մեր ասածը մեծ փոփոխություն չէ»,- «Առավոտի» հետ զրույցում պատասխանելով հարցին՝ արդյոք ուշացած չէ՞ ընդդիմության ներկայացրած օրենսդրական փոփոխությունը՝ հարյուր տոկոսանոց համամասնական ընտրակարգի անցնելու համար, ասաց ԱԺ ՀՅԴ խմբակցության քարտուղար Արտաշես Շահբազյանը:

Կարդացեք էջ 2:

### Լյուստրացիայի մասին օրենքը քաղաքական շարժառիթներ ունի

«Ժամանակին մեր պետությունը լյուստրացիայի անհրաժեշտությունը չի տեսել, հիմա ինչ-ինչ քաղաքական շարժառիթներով, իմ գնահատմամբ՝ հիմնականում նախընտրական, այս հարցը որոշակի շրջանակներում դարձել է արդիական: Խնդրեմ, կան դրա լուծումները՝ սահմանադրական փոփոխություններ, մեր միջազգային որոշ պարտավորությունների վերանայում եւ այլն: Միայն դրանից հետո կարելի է անդրադառնալ այս խնդրին»,- «Առավոտի» հետ զրույցում անդրադառնալով «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության «Լյուստրացիայի (զաղտնազերծման) մասին» օրենսդրական նախաձեռնությանը՝ ասաց ՀՀ արդարադատության փոխնախարար Գրիգոր Մուրադյանը:

Կարդացեք էջ 3:

### «Ա1+»-ի հայցը կրկին մերժեցին

Երեկ ՀՀ վերաքննիչ դատարանը մերժեց Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) եւ «Արմնյուզ» ՓԲԸ-ի դեմ «Մելտեքս» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը, ուժի մեջ թողնելով 2010 թվականի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը: Հիշեցնենք, որ 2010 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ վարչական դատարանը նույնպես մերժել էր «Մելտեքս» ՍՊԸ-ի հայցը՝ որով բողոքարկվում էր ՀՌԱՀ 2010թ. դեկտեմբերի 16-ին կայացրած թիվ 96-Ա որոշումը: Այդ որոշմամբ «Ա1+» հեռուստաընկերությանը զրկվել էր եթեր հեռարձակվելու իրավունքից:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Քննարկում

Այսօր, ժամը 11-ին, «Պոստ Սկրիպտում» մամուլի ակումբի հյուրն է ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը:

### Եղանակ

Երեւան - 9 +1, Շիրակ - 21 - 3, Կոտայք - 17 - 3, Գեղարքունիք - 17 - 3, Լոռի - 16 - 2, Տավուշ - 13 0, Արագածոտն լեռներ - 21 - 3, Արագածոտն նախալեռն. - 10 +1, Արարատ - 10 +1, Արմավիր - 10 +1, Վայոց Ձոր լեռներ - 21 - 3, Վայոց Ձոր նախալեռն. - 9 +2, Սյունիքի հովիտներ - 8 +2, Սյունիքի նախալեռներ - 11 +1, Արցախ - 7 +2

## ՄՈՒՏՔԸ՝ ՆԵՐՍԻ ԿՈՂՄԻՑ

# Այսահարություն՝ իջնող ձյան տակ



Մտքումս մի այլ գրելիք էր, բայց անվերջ իջնող ձյունը ինձ տարավ-հասցրեց առաջին մարդու ծնունդին:

Այո, այդպես ծնվեց առաջին մարդը՝ կրակե ծաղիկը ձեռքին, որի սրտի մեջ, ինչպես կարմիր վարդի սրտում, շողշողում էր կինը՝ որպես նարնջագույն արցունքի շփոթված կաթիլ: Եվ այդ կինը Մեծ Մայրն էր, որի քնքուշ կոնքերի խորախորհուրդ խորհրդում լույս աշխարհ դուրս գալու անհագ ցանկությունից կարկամ սպասում էին նրա զավակների արդեն կենդանի հունտերը:

Հետո արդեն տեսնելով կրակե ծաղկից դուրս ելնող առաջին կնոջը՝ սկիզբ առավ կրակի ու ջրի հավերժական կռիվը: Ծովը շարունակում էր ծանր շնչել, բարձրանում էր ու իջնում, հորձանք տալիս երկրի վրայով եւ չկարողանալով հաղթել կրակին՝ իր խանդափրփուր խորքերից ծնունդ տվեց երկրորդ կնոջը, ով, սակայն, Մեծ Մայրը չէր:

Ծովը ծնունդ տվեց իր նման անսահման, փրփուրի պես թեթեւ եւ ծովահարսի նման հմայող իր ստեղծած կնոջը: Եվ մի օր, բարձրացնելով իր ալիքների կատարին, ցույց տվեց առաջին տղամարդուն: Ծովը խանդում էր կրակին, ծովը վրեժխնդիր էր, եւ որպեսզի նրան հաղթեր, կրակից ծնված կնոջ դիմաց կանգնեցրեց իր ստեղծած փրփրածին կնոջը, եւ առաջին տղամարդը շփոթվեց, թեեւ ծնվել էր կրակե ծաղիկը ձեռքին: Եվ նկատելով երկու կանանց միջեւ կանգնած առաջին տղամարդու թափառ, մոլորված հայացքը՝ ծովը խորը շունչ քաշեց եւ իր հետ տանելով իր ստեղծած փրփուր աղջկան՝ հասկացավ, որ հաղթել է կրակին: Քանի որ նա գիտեր արդեն, որ առաջին տղամարդը այլեւս հանգիստ չի ունենալու, քանզի հողի վրա՝ կրակի կողքին, շարունակ կարոտելու է ծովին, իսկ ծովում կարոտելու է հողին ու կրակին: Այո, դա այդպես եղավ: Ծովն ու կրակը կռվեցին ու հաշտվեցին, նրանք խաղաղվեցին ու դարձյալ կռվեցին: Այդպես նրանք խաղում էին շարունակ: Դա նրանց սիրելի սովորույթն էր, նրանք այդպես էին ուրախանում: Նրանք ուրախանում էին, իսկ տղամարդն ու երկու կանայք այդ օրվանից դատապարտվեցին հավերժ տառապանքի, քանզի ոչ մի տեղ չկար նրանց փնտրած կատարյալ երջանկությունը՝ ո՛չ ծովի վրա, ո՛չ էլ կրակի կողքին: Այո, այդպես եղավ աշխարհստեղծման արշալույսին: Եղավ ու շարունակվեց եւ դեռ շարունակվելու է այնքան, քանի դեռ կա ծովը, կան հողն ու կրակը ու նրանց արանքում՝ տղամարդն ու կինը՝ հավերժական մենակ:

Եվ որպեսզի այնուհետեւ չափից ավելի հաճախ չնայի ծովի կողմը, չտարվի ծովի շարունակ կանչող հմայքով՝ տղամարդը սկսեց հողը զարդարել Մեծ Մոր արձաններով: Ու ցանկանալով փակվել, ներանձնանալ իր մեջ եւ ընդմիշտ մնալ իր տաքուկ կրակի կողքին՝ սկսեց մեծարել, խնկարկել նրան, անուշահոտ բուրմունք արձակող տարաբնույթ ծաղիկներով զարդարել նրա ոտքերը եւ ծնկի իջնել պտղաբեր զավակատան առջեւ: Իսկ կինը, օ՛, հեռատես կին, իր տղամարդուն նույնպես իր տան կրակի կողքը պահելու համար նրան եւ նրա այրական սկիզբը փառաբանելու համառ ցանկությամբ նրա առնանդամի հինգ մետրանոց հուշարձաններ կանգնեցրեց: Եվ ամեն առավոտ ու իրիկուն նույնպես խնկարկում էր այդ պիղծ ցցունքները, միայն թե իր տղամարդու հայացքը հեռու պահի ծովից: Բայց նորաստեղծ աշխարհում մարդն արդեն ուրիշ հուն էր ընտրել իր հեռավոր ճանապարհի համար, եւ այդ ճանապարհը նրան տրվել էր, երբ դեռեւս նա չգիտեր, որ կան նաեւ ուրիշ ուղիներ: Թեեւ նրա համար անհնարին էր դառնում անընդհատ վախի մեջ ապրելը: Բայց վախենալով՝ ժամանակը չես կանգնեցնի: Օրերն անցնում էին, եւ անչափագիր ծովի ձայնը, միեւնույն է, շարունակ կանչում էր տղամարդուն: Ու նա հաճախ ծովի փրփուրներից ծնված աղջկան տեսնում էր փակ աչքերով եւ այսահարվում:

Իսկ ձյունը շարունակում էր տեղալ՝ հիշեցնելով, որ սերը ջրի ու կրակի արանքում է:

ՄԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

# Կառավարությունը մերժեց ընդդիմադիրների առաջարկը

## Մեծամասնականի եւ համամասնականի խնդիրը կառավարություն-խորհրդարան ծիրին մեջ

Կառավարությունը երեկվա իր նիստում մերժեց 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգի անցնելու՝ ԱԺ ՀՅԴ եւ «Ժառանգություն» խմբակցությունների օրենսդրական նախաձեռնությունը: Ըստ «Երկիր» էլեկտրոնայինի՝ լրագրողների հետ ճեպազրույցում ՀՀ արդարադատության փոխնախարար Գրիգոր Մուրադյանը պարզաբանել է, որ յուրաքանչյուր երկրում ընտրակարգը որոշվում է ոչ թե ըստ այն հանգամանքի՝ համամասնակա՞նը պետք է հարյուր տոկոս լինի, թե՞ մեծամասնականը, այլ՝ թե այդ երկրում ինչպիսի անհրաժեշտություն կա: Նախագծի ընդունումն, ըստ փոխնախարարի, ժամանակավրեպ է, քանի որ ընտրական գործընթացներն, ըստ էության, արդեն մեկնարկել են, եւ այս անցումը կարող է պարզապես խոչընդոտել այդ գործընթացներին:

Ըստ արդարադատության փոխնախարարի՝ մեծամասնական ընտրակարգի անհրաժեշտությունը պայմանավորված է հետեւյալով. «Այն ունակ է ապահովել որոշակի կապ կոնկրետ պատգամավորի եւ տարածքի բնակչության միջեւ, ինչը զուտ կուսակցությունների պարագայում այնքան էլ հնարավոր չէ, որովհետեւ այնտեղ խոսքը համապետական մասշտաբով հանրության շահերի ներկայացման մասին է, ոչ թե կոնկրետ տարածքի կոնկրետ շահերի ներկայացման: Այս պարագայում համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերի զուգակցումը եւ մեծամասնականի պահպանումը, թերեւս, արդարացված է»:

ՀՅԴ խմբակցության քարտուղար Արտաշես Շահբազյանը պատասխանելով «Առավոտի» մի քանի հարցերի՝ ասաց, թե իրենք դեռ քայլեր ունեն անելու եւ անգամ կառավարության բացասական եզրակացությամբ (հանձնաժողովի եզրակացությունը դեռ չկա, սակայն ենթադրվում է, որ այն եւս բացասական է լինելու) ընդդիմադիր խմբակցությունները դեռ ունեն շանս՝ օրինագիծը ներկայացնելու խորհրդարանին: Իսկ փետրվարի 15-ին նախատեսված են նաեւ խորհրդարանական լսումներ հենց այս թեմայի շուրջ:



Մեր զրուցակիցը ասաց, թե ցավում է, որ կառավարությունը մերժել է ընդդիմադիր խմբակցությունների ներկայացրած օրինագիծը. «Ցավում եմ, որ եզրակացությունը եղավ բացասական, եւ կարծում եմ՝ այստեղ որոշակի անտրամաբանական վիճակ կա, որովհետեւ այսպիսի բանաձեւում առաջացավ այն, որ հանրապետությունում ձեւավորվել է կոնսենսուս մինույս մեկ վիճակ, այսինքն՝ կարծես թե բոլորի համար ընդունելի է, եւ ընդունելի չէ միայն Հանրապետական կուսակցության համար: Կարծում եմ՝ խոհեմ կլիներ, եթե ընդունվեր, որովհետեւ եթե ասում ենք՝ ժողովրդավարություն, ժողովրդավարությունը միայն ձեռք բարձրացնելով չի լինում, ժողովրդավարությունը ընդհանուր մթնոլորտի հետ հաշվի նստել է նշանակում, որովհետեւ եթե այսօր պարզ թվաբանությամբ կարելի է մերժել որեւէ որոշում, սա չի նշանակում, որ ամեն մի մերժում տրամաբանված է»:

Դաշնակցական պատգամավորի կարծիքով՝ կառավարությունն ավելի խոհեմ կլիներ, եթե չմերժեր իրենց առաջարկը:

Ըստ Արտաշես Շահբազյանի՝ կառավարության մերժումը «շատ մեծ անակնկալ չէր, կարելի էր սպասել, որ նման հանգուցալուծում կարող է լինել, բայց մենք մտել էինք այս պայքարի մեջ՝ նկատի ունենալով, որ վերաբերմունքը կարող էր այսպիսին լինել: Սակայն մենք չենք սահմանափակվում սրանով, մեզ համար չավարտվեց հարցը»:

Արտաշես Շահբազյանը տեղեկացրեց, որ փետրվարի 15-ին կայանալիք խորհրդարանական լսումներին իրենք պատրաստվում են հրավիրել նաեւ արտախորհրդարանական ուժերին՝ հարցը կրկին քննարկելու համար. «Այնուամենայնիվ, ուզում եմ ակնկալել, որ ընդհանուր տրամադրությունները կարող են վիճակ փոխել, եւ մեր գործընկերները կհասկանան, որ այնուամենայնիվ չարժե հոսանքին հակառակ գնալ, երբ բոլորը այսպիսի տրամադրություն ունեն, եւ դու հակառակվում ես, որքան էլ բացատրությունները գեղեցիկ եւ բազմազան հնչեն, այնուամենայնիվ, տրամաբանությունն ասում է, որ կան ինչ-որ շահեր, որոնք ստիպում են չգնալ այն ճանապարհով, որը ընդունելի է մնացած բոլորի համար: Եվ երբ դու նաեւ իշխանական ուժ ես, սա առավել խոցելի է դարձնում քո տեսակետը»:

Պատասխանելով «Առավոտի» հարցին՝ այնուամենայնիվ, պարզ է, որ ժամկետները քիչ են, եւ իրոք հնարավո՞ր է հասցնել կատարել օրենսդրական փոփոխություն ընտրություններից արդեն երկուսուկես ամիս առաջ՝ մեր զրուցակիցն ասաց, որ իր կարծիքը հակառակն է՝ նա համոզված է, որ ժամկետները բավարար են, եւ լավագույն ցանկության դեպքում հնարավոր է հասցնել օրենսդրական փոփոխությունները. «Ինչո՞ւ ժամանակ չկա, կա, եւ կհասցնենք, անշուշտ, հասկանալի է, որ մեր առաջարկը դժվարության կհանդիպի, պատին դեմ կառնենք, բայց սա աշխատանք է, եւ եթե հնարավորություն կա ինչ-որ բան փոխելու, փորձենք անել, եւ եթե տեսնում ենք՝ հաջողվեց, մի աննախադեպ համախմբում ստեղծել, հանրապետության բոլոր ուժերը՝ թե ընդդիմադիր, թե իշխանական, որոնք իրար կողքի այսպես չէին նստել, այսպիսի խայտաբղետ հավաքականությամբ, նստեցին եւ փորձեցին»:

Արտաշես Շահբազյանը համոզված է, որ ցանկության դեպքում հարցը կարելի է քննարկել նաեւ արտահերթության կարգով եւ հասցնել մինչ ընտրություններ կատարել «Ընտրական օրենսգրքի» համապատասխան փոփոխությունները:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ

# Երկգլխանի մարդիկ խորհրդարանում կա՞ն

ԱԺ երեկվա նիստը չփայլեց իր մարդաշատությամբ, թեպետ տեղի ունեցան մի քանի օրինագծերի քվեարկություններ: «Ժառանգության» ներկայացուցիչ Լարիսա Ալավերդյանը՝ նկատելով, որ ՀՀԿ-ական Արեգ Ղուկասյանը քվեարկում է ոչ միայն իր, այլեւ կողքի բացակա ընկերոջ փոխարեն, դիտողություն արեց. «Հետաքրքիր պահ է, երբ ցանկացած էթիկայի օրինագիծ զրոյացվում է: Ես պնդում եմ, որ այստեղ չկա 67 պատգամավոր: Իմ առաջարկությունը՝ դիմել հաշվիչ հանձնաժողովին, մերժվում է: Իմ աչքով տեսնում եմ՝ պարոն Ղուկասյանը քվեարկում է եւս մեկ հոգու համար: Երբ տիկին Բախշյանն ասում է՝ գլուխներով են հաշվում, ոչ թե գլխաքանակ, որ վիրավորական լինի, այստեղ շատ դեմ են եղել, բայց ստացվում է՝ այստեղ երկգլխանի մարդ կա. եթե մեկ գլխով հոգին քվեարկում է երկու հոգու համար, դա ի՞նչ է նշանակում: Եկեք պայմանավորվենք ու չկեղծենք»: Ընդդիմադիր պատգամավորին անմիջապես փորձեց հակադարձել ՕԵԿ խմբակցության ղեկավար Հեղինե Բիշարյանը եւ հայտարարեց. «Կարծում եմ՝ խմբակցությունները պետք է կարգապահ լինեն ու իրենց խմբակցության անդամներին հրավիրեն դահլիճ՝ քվեարկության: Ողջ խմբակցության կողմից մի պատգամավոր է մասնակցում ու դեռ քննադատում է մյուսներին»: ՀՀԿ խմբակցության անդամ Արեգ Ղուկասյանն էլ իր հերթին փորձեց պաշտպանել իր պատիվը եւ ասաց. «Չգիտեմ՝ գլուխներո՞վ են հաշվում մարդկանց, թե՞ չէ, ես համարում եմ, որ դահլիճում կան նաեւ զրո գլխանոց մարդիկ, ովքեր դահլիճում են, բայց չեն քվեարկում»: Այստեղ էր, որ առաջացավ մի իրավիճակ, որի մասին հայտնի անեկդոտում ասում են՝ մե ծիծաղ, մե ուրախություն՝ չհաշված աղմուկը եւ միմյանց չլսելու բարձր կուլտուրայի դրսեւորումները:

Մ. Ե.

Հ. Գ. Օպերատորները ֆիքսել էին, որ մի քանի հոգու փոխարեն է քվեարկել նաեւ Հերմինե Նաղդալյանը, սակայն վերջինս, երեկ պատասխանելով լրագրողների հարցերին, հերքեց դա, ասելով, որ ինքը ուրիշի աթոռին էր նստած եւ այդ պատճառով հեռվից սեղմեց իր սեփական կոճակը:

# Շնորհավոր ծնունդդ, Շամշյան



Շեկոյան Արմենի վերջին կեսլուրջ-կեսկատակ պատմություններից մեկը սա է.«Երբ մարդկանց ասում եմ, որ ճանաչում եմ Լեւոն Տեր-Պետրոսյանին, Ռոբերտ Քոչարյանին, Սերժ Սարգսյանին, գլխով են անում, բայց երբ ասում եմ, որ ճանաչում եմ Գագիկ Շամշյանին, զարմանում են, չեն հավատում, հարցնում են՝ լա~վ է, իսկակա՞նից, ճի՞շտ ես ասում…»:

Այսօր իր տեսակի մեջ ֆենոմեն դարձած Գագիկ Շամշյանի ծննդյան օրն է: Մեր խմբագրությունում երեւի յուրաքանչյուրը սեփական աչքով է տեսել, թե որքան աշխատասեր, որքան պրպտուն, միեւնույն ժամանակ՝ ինչ ռոմանտիկ հոգու տեր տղա է Գագիկը: «Առավոտը» սրտանց շնորհավորում է Գագիկ Շամշյանին՝ ծննդյան օրվա կապակցությամբ, մաղթում, որ վերջապես իրականանան նրա երկու երազանքները՝ տուն ունենա եւ ընտանիք կազմի: Ու մեկ էլ ընկերաբար մաղթում ենք՝ Գագիկ ջան, մեկ-մեկ հանգստացիր, մեղք ես…

aravot daily
ՈՒՐԲԱԹ 10.02.2012

# Բա որ Լոռվա մարզն էլ որոշի անկախանալ եւ լյուստրացիա անել

## ՀՀ արդարադատության փոխնախարարի համոզմամբ՝ անթույլատրելի է, որ նախկին ԽՍՀՄ-ին մաս կազմած Հայաստանում լյուստրացիայի մասին օրենք ընդունվի

Անցած շաբաթ ՀՀ խորհրդարանի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում, ՀՀ արդարադատության փոխնախարար Գրիգոր Մուրադյանի մասնակցությամբ, քննարկվել էր «Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին» «Ժառանգություն» խմբակցության օրենսդրական նախաձեռնությունը: ՀՀ կառավարությունն այս օրինագծի առնչությամբ բացասական եզրակացություն էր ներկայացրել, իսկ խմբակցության ղեկավար Ստեփան Սաֆարյանը օրենքի նախագծի քննարկումը 15 օրով հետաձգել էր:

Հիշեցնենք, որ սույն օրինագծով ԱԺ-ում ընդդիմադիր խմբակցությունն առաջարկում է իրավական սահմանում տալ գաղտնազերծմանը՝ ամրագրելով այդ գործընթացի հաջորդականությունը: Առաջարկվում է գաղտնազերծել մինչեւ 1991թ. սեպտեմբերի 21-ի Հայաստանի անկախության հանրաքվեն նախկին ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կամ այլ երկրների հատուկ ծառայությունների հետ բացահայտ կամ գաղտնի հիմունքներով աշխատած կամ համագործակցած անձանց եւ նրանց նախ՝ պաշտոնանկ անել, ապա կանխել նրանց բարձր պաշտոններ զբաղեցնելու հնարավորությունը:

Թե ինչո՞ւ է ՀՀ կառավարությունը դեմ այս օրինագծին՝ «Առավոտի» հետ զրույցում պարզաբանեց արդարադատության փոխնախարար Գրիգոր Մուրադյանը: «Կառավարությունը դեմ է այս օրինագծին երկու հիմնական պատճառով, որոնցից առաջինը պայմանավորված է միջազգային իրավունքի սկզբունքներով, ըստ որոնց՝ Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ գոյության ժամանակ նրա բաղկացուցիչ մասն է կազմել: Այսինքն՝ միջազգային իրավունքի տեսանկյունից ԽՍՀՄ-ը չի դիտարկվում որպես այլ պետություն: Այն ժամանակ Հայաստանը ԽՍՀՄ հանրապետություններից մեկն էր: Այժմ Հայաստանի Հանրապետությունը անկախ պետություն է՝ ԽՍՀՄ իրավահաջորդներից մեկը:

Մերժման երկրորդ փաստարկը սահմանադրա-իրավական հարթությունում է: Ըստ էության, օրինագծով առաջարկվում է արգելել մինչեւ 1991թ.-ն կատարված մի գործունեություն, որն այն ժամանակ, ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ գործող օրենսդրության համաձայն, համարվում էր իրավաչափ: Եթե անգամ հետեւենք օրինագծի հեղինակների տրամաբանությանը՝ այդ արգելքները կիրառելի եւ թույլատրելի լինելու մասով, ապա խնդիր է առաջանում՝ այդ արգելքներն ինչպե՞ս կարող են հետադարձ ուժ ունենալ այն դեպքում, երբ մեր Սահմանադրության 42-րդ հոդվածն ուղղակիորեն արգելում է դա՝ արձանագրելով, որ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները հետադարձ ուժ չունեն: Մինչդեռ օրինագծի հեղինակները փորձում են նաեւ այդ անձանց սահմանադրական իրավունքը սահմանափակել՝ ԽՍՀՄ ՊԱԿ-ի հետ համագործակցած անձանց նկատմամբ պետական պաշտոններ զբաղեցնելու հարցում նախատեսելով արգելքներ: Սա նաեւ սահմանադրական իրավունքի սահմանափակում է: Այսինքն՝ օրինագծի ամբողջ տրամաբանությունն ուղղակի հակասության մեջ է մտնում մեր Սահմանադրության հետ: Միայն այդ հիմքով արդեն իսկ կարելի է ասել, որ այդ օրինագիծը չի կարող ընդունվել»:

Ինչ վերաբերում է նախկին ԽՍՀՄ այլ՝ մերձբալթյան հանրապետությունների, նաեւ Արեւելյան Եվրոպայի՝ նախկին սոցճամբարի երկրների կողմից համանման օրենքի ընդունմանը, ապա Գրիգոր Մուրադյանի մատուցմամբ՝ դրանք պետք է տարանջատել երկու խմբի. «Դրանք, միջազգային իրավունքի տեսանկյունից, անկախ պետություններ են եղել եւ կան: Խորհրդային ճամբարի երկրներն անկախ պետություններ են: Մերձբալթյան երկրները, ըստ միջազգային հանրության, չեն ճանաչվել որպես ԽՍՀՄ-ի մաս, եւ պետությունների զգալի մասը ճանաչել է, որ նրանք օկուպացված են եղել ԽՍՀՄ կողմից: Ավելին, ԽՍՀՄ-ն ինքը անուղղակի նույնպես փաստել է սա, երբ Մոլոտով-Ռիբենտրոպի հայտնի պակտը, որը հիմք է հանդիսացել ԽՍՀՄ կողմից այդ տարածքները զբաղեցնելու համար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից ճանաչվել է հակաիրավական: Հետեւաբար որեւէ համեմատություն Հայաստանի իրավիճակի կամ կարգավիճակի եւ այդ պետությունների կարգավիճակի միջեւ չի կարող լինել: Բացառությունը միայն Վրաստանն է, որը նույնպես ԽՍՀՄ բաղկացուցիչ մասն էր, բայց ճանաչված չլինելով որպես ԽՍՀՄ կողմից օկուպացված կամ բռնազավթված երկիր՝ ինչ-ինչ պատճառներով հռչակել է, որ օկուպացված է եղել ԽՍՀՄ կողմից: Հայաստանի Հանրապետությունը երբեւէ իր նորագույն պատմության մեջ՝ իր անկախությունից ի վեր, չի հռչակել, որեւէ կերպ չի հայտարարել, որ ինքը եղել է ԽՍՀՄ կողմից օկուպացված կամ բռնազավթված պետություն կամ, որ եղել է ԽՍՀՄ գաղութը, որ այդ պետության կողմից որեւէ կերպ միջազգային իրավունքի խախտումով բռնակցվել է: Ուստի, եթե անձը աշխատել է իր պետության ազգային անվտանգության մարմինների համար՝ չի կարող դրա համար հետին թվով որեւէ ձեւով ենթարկվել պատասխանատվության, եւ սահմանադրական, մանավանդ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու այդ անձանց իրավունքները չեն կարող որեւէ կերպ սահմանափակվել»:

Մենք փոխնախարարին հարցրինք՝ կարո՞ղ է մատնանշել միջազգային որեւէ ակտ, որով ԽՍՀՄ վարչական, պետական սահմաններն այն ժամանակ չեն ճանաչվել, կամ որով մերձբալթյան պետությունների կարգավիճակը տարբերվել է ԽՍՀՄ մյուս հանրապետությունների կարգավիճակից: Երկրորդ՝ ի՞նչ կապ ունի ԽՍՀՄ-ի գաղութարար կամ ԽՍՀ-ների գաղութացված լինել-չլինելն այսօր քննարկվող օրինագծի հետ: Կամ արդյոք, ըստ փոխնախարարի, Հայաստանը շարունակո՞ւմ է մնալ ԽՍՀՄ-ի կամ Ռուսաստանի մաս: «ԽՍՀՄ-ը՝ որպես այդպիսին, ճանաչված է եղել միջազգային հանրության կողմից: Խոսքը միջազգային ակտի մասին չէ: Մի շարք պետություններ, օրինակ՝ ԱՄՆ-ն, որը ՄԱԿ-ի Ախ մշտական անդամ է, չեն ճանաչել միայն մերձբալթյան երկրների իրավաչափ կերպով ԽՍՀՄ կազմի մեջ մտնելու հանգամանքը, եւ իրենք՝ մերձբալթյան երկրները, անկախանալուց հետո հռչակել են իրենց՝ ԽՍՀՄ կողմից օկուպացված լինելու մասին»,- մեր հարցադրումներին ի պատասխան՝ հավելեց արդարադատության փոխնախարարը: Նրա մատուցմամբ՝ լյուստրացիայի խնդիրն առաջանում է այն դեպքում, երբ պետությունը հակառակ իր կամքին հայտնվել է այլ պետության տիրապետության ներքո, բռնազավթվել է ԽՍՀՄ կողմից. «Հակառակ դեպքում տրամաբանությունը կբերի նրան, որ, ֆանտաստիկ օրինակ բերեմ, եթե վաղը Լոռվա մարզը որոշի անկախանալ Հայաստանից՝ ինքը կարող է ասել, որ ՀՀ ազգային անվտանգության մարմինների հետ համագործակցած բոլոր գործակալները օրենքից դուրս են»:

Կարծում եք՝ ձեր բերած օրինակը համարժեք եւ օրինաչա՞փ օրինակ է: Մեր այս դիտարկմանը Գ. Մուրադյանն արձագանքեց, թե օրինաչափ չէ, բայց անտրամաբանական է նաեւ այն պնդումը, որ եթե անձը ժամանակին համագործակցել է մեկ միասնական պետության ազգային անվտանգության մարմինների հետ, ինչն այդ պետության ներսում եղել է իրավաչափ, հետագայում որպես այլեւս այդ միասնական պետությունից տարանջատված երկրի, տվյալ դեպքում՝ ՀՀ քաղաքացի, նրա գործունեությունը ենթարկվի գաղտնազերծման: Նրա ասելով՝ եթե նույնիսկ այս օրինագիծը պետք է ի հայտ գար, ապա դա պետք է լիներ Հայաստանի անկախացումից անմիջապես հետո, ինչպես դա արվեց մերձբալթյան երկրներում, բայց այսօր դա անելն, ըստ Մուրադյանի, անթույլատրելի է, նախ՝ որովհետեւ ՀՀ անկախացումից հետո ՀՀ-ն չի հռչակել ԽՍՀՄ կողմից բռնազավթված երկիր լինելու մասին, երկրորդ՝ 1995-ին ընդունել է Սահմանադրություն, որի վերը հիշատակված 42-րդ հոդվածը հակասում է այս օրինագծին. «Այդ հարցը հիմա դնել, այն էլ այդպիսի կտրուկ լուծումների եղանակով, նշանակում է ուղղակի փլուզել մեր՝ ներկայումս որոշակիորեն կայունացած ազգային անվտանգության համակարգը»:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հ. Գ. Հարցազրույցն ամբողջությամբ կարդացեք aravot.am կայքում:



# «Անհայտությունից եկավ, գնաց դեպի անհայտություն»

Երեկ aravot.am-ը ՀԱԿ ներկայացուցիչ Զոյա Թադեւոսյանից հետաքրքրվեց, թե իսկապե՞ս ՀԱԿ-ում որոշակի կանոններ են գործում, որ եթե մտար՝ էլ դուրս գալ չի կարելի, հակառակ դեպքում դավաճանի պիտակ ես կրելու, ինչպես վստահեցրել էր նախկին քաղբանտարկյալ Սուրեն Սիրունյանը: Զոյա Թադեւոսյանի խոսքերով՝ «Ես Սուրեն Սիրունյանին երբեք ՀԱԿ-ում չեմ հանդիպել, նրան երբեք ակտիվ քաղաքական գործունեության մեջ չեմ տեսել: Թե հիմա նա որտեղ է եղել իր գործունեությամբ, որտեղից է հնարել այդ ամենի մասին՝ ես չեմ կարող ասել: Ես երբեք չեմ կիսում նրա կարծիքը, այդպիսի բան գոյություն չունի: Նա թող հանգիստ դուրս գար ՀԱԿ-ից, անպայման պիտի դուրս գար ու սկսեր ցեխ շպրտե՞լ, որ հետո զայրույթ առաջացներ, մարդիկ իրեն սկսեին հակադարձե՞լ, որ հետո ինքը գնահատեր, թե դա մաֆիայի օրենք է: Չէր ուզում՝ թող դուրս գար, ո՞վ էր նրան խնդրում մնալ ՀԱԿ-ում»:



Մենք նաեւ հետաքրքրվեցինք, երբեւէ եղե՞լ է, որ տիկին Թադեւոսյանը չհամաձայնի ՀԱԿ-ի մյուս անդամների հետ, եւ ճի՞շտ է արդյոք, որ այնտեղ անհամաձայնության դեպքում ծեծում են. «Վա յ, անհարմար չի՞ բա: Ես ուղղակի չեմ ուզում այդ տղայի մակարդակին իջնել»: Տիկին Թադեւոսյանը մեզ հրավիրեց իրենց քաղխորհրդի նիստերին՝ համոզվելու համար, թե հարգանքի ինչ մթնոլորտ է տիրում այնտեղ: Մեր դիտարկմանը, որ քաղխորհրդի նիստերում բնականաբար չեն ծեծելու՝ նա վստահեցրեց, որ օրինակի համար գուցե մեկը մյուսին փող պարտք լինի ու չտա՝ ծեծեն, բայց դա հո չի՞ նշանակում, որ ՀԱԿ-ում ծեծում են. «Նորմալ մարդու հետ նորմալ են շփվում, աննորմալի հետ իրեն համարժեք լեզվով են խոսում, ի՞նչ ասեմ: Ես այդ տղային ոչ տեսել եմ, ոչ շփվել եմ: Ինձ համար նա անհայտ արարած է, այդպես անհայտությունից եկավ, գնաց դեպի անհայտություն»:

Հ. ՁԵԲԵՋՅԱՆ

## ԲՀԿ-ի հայտն անգամ չքննարկվեց

«Ես դա որեւէ կերպ չեմ կարող բացատրել: Ակնհայտ է մեկ բան՝ ԵԺԿ-ն կայացրել է քաղաքական որոշում եւ դրա հիմքում, բացարձակ այն չէ, որ այս կամ այն կուսակցությունը առավել կամ պակաս ժողովրդավար է կամ առավել կամ պակաս է համապատասխանում եվրոպական չափորոշիչներին»,- Aravot.am-ի հարցին՝ ինչո՞վ կբացատրեք Եվրոպական ժողովրդական կուսակցության որոշումը, համաձայն որի ՀՀԿ-ն, ՕԵԿ-ը եւ «Ժառանգությունն» անդամագրվեցին ԵԺԿ-ին, իսկ ԲՀԿ-ի հայտն անգամ չքննարկվեց, ասաց ԲՀԿ խմբակցության ներկայացուցիչ, ԱԺ եվրոինտեգրացման հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանը:

Ինչպես մարսելյան համագումարից հետո, տիկին Զոհրաբյանը կրկին հղում է անում «Ժառանգություն» կուսակցության նախագահ Րաֆֆի Հովհաննիսյանին, ով հայտարարել էր, թե իր համար հասկանալի չէր՝ ինչո՞ւ մարսելյան համագումարում ԲՀԿ-ի անունը չհնչեց: Ամեն դեպքում, Նաիրա Զոհրաբյանը բացառապես ԵԺԿ-ի գործն է համարում կայացված քաղաքական որոշումը եւ վստահեցնում, որ ԲՀԿ-ն շարունակելու է իր ծրագրում ներառված ինտեգրացիոն գործընթացները:

Հակադարձելով Aravot.am-ի դիտարկմանը՝ արդյո՞ք այս որոշումը եվրոպական հանրույթի վերաբերմունքն է ԲՀԿ-ին, տիկին Զոհրաբյանն ասաց. «Ոչ, որովհետեւ եվրոպական հանրույթը չի սկսվում եւ վերջանում ԵԺԿ-ով: Այնտեղ բավականին շատ քաղաքական հոսանքներ կան եւ ԵԺԿ-ն դրանցից ընդամենը մեկն է»:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Անհատ տաքսիստների հարցը ձգձգում են

## Տրանսպորտի եւ կապի նախարարությունը նրանց խնդրին լուրջ չի՞ վերաբերվում

Շուրջ մեկուկես տարի է՝ անհատ տաքսու վարորդները պայքարում են «Զվարթնոց» օդանավակայանի ժամանման մուտքի մոտ կայանման իրավունք ստանալու համար ու թեեւ կառավարության ներկայացուցիչները խոստացել էին մեկ ամսում հարցը կարգավորել, սակայն մինչ օրս տաքսիստները չեն կարողանում նշված հատվածում կայանել:

Օդանավակայանի նոր տերմինալը շահագործման հանձնելուց հետո, տաքսիստների համար նոր չափանիշներ սահմանվեցին՝ ժամանման սրահի մուտքի մոտ իրավունք ունեն կայանել միայն 2 տաքսի ծառայություններ՝ «Աէրո» եւ «Տուր»:

Նշենք, որ անհատ տաքսու վարորդները դժգոհում էին, որ իրենք եւս հավասար իրավունքներ ունեն վերը նշված տաքսի ծառայությունների պես, քանի որ տրանսպորտի եւ կապի նախարարությունից իրենք էլ ստացել են լիցենզիա եւ կարող են օգտվել տաքսու համար նախատեսված բոլոր կայանատեղիներից: Օդանավակայանի ղեկավարությունն էլ պարզաբանել էր, որ իրենք մրցույթ էին հայտարարել եւ պահանջ դրել՝ տաքսի մեքենաներն աշխատեն միայն բենզինով, որպեսզի բեռնախցիկները ազատ լինեն, ունենան օդափոխիչ համակարգ եւ այլն: Մրցույթը շահել էին «Աէրո» եւ «Տուր» տաքսի սերվիսները:

Այս առնչությամբ դեռեւս անցյալ տարվա հոկտեմբերին տրանսպորտի եւ կապի նախարարությունում քննարկում է եղել օդանավակայանի ներկայացուցչի, ԱԺ պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի եւ «Քաղաքացիական դիրքորոշում եւ ակտիվ հասարակություն» կազմակերպության ղեկավար Գեւորգ Դոստուրյանի միջեւ:

Գ. Դոստուրյանի խոսքերով՝ «Օդանավակայանի ներկայացուցիչը պնդում էր, որ այն մեքենաները, որոնք կցանկանան եւս տաքսի ծառայություն մատուցել այդ հատվածում, պետք է 3 տարվա մեքենա լինեն: Բայց անգամ քաղաքում տաքսի վարելու համար մեքենաների տարիքը սահմանված է 10 տարի, որն էլ առաջիկայում պետք է վերացնեն: Իսկ իրենք մեր վրա նման սահմանափակում են դնում: Մենք առաջարկեցինք՝ գոնե տարիքը դարձնեն 5 տարի: Բացի այդ, եթե իրենք պահանջում են, որ մեքենան բենզինով լինի, իբր բեռնախցիկն ազատ լինելու համար, որպեսզի ուղեւորների ճամպրուկները տեղավորվեն, մենք էլ ասում ենք՝ կան այնպիսի մեքենաներ, որ, ճիշտ է, գազի բալոնը տեղադրված է բեռնախցիկում, բայց այդ բեռնախցիկն այնքան մեծ է, որ մի քանի ճամպրուկ տեղավորում է»:

Նշենք, որ ուսումնասիրություններից պարզվել է, որ օդանավակայանը մրցույթի մասին ոչ բոլորին է իրազեկել: Ուստի տրանսպորտի եւ կապի նախարարությունն էլ որոշել էր, որ նոր մրցույթ պետք է հայտարարվի, սակայն մինչ այդ պետք է մրցույթի պահանջները փոխել: Ընդ որում՝ նախարար Մանուկ Վարդանյանն անձամբ էր խոստացել, որ մեկ ամսում խնդիրը կլուծվի: Գեւորգ Դոստուրյանի ներկայացմամբ՝ «Արդեն 3 ամիս է՝ դիմում եմ, որպեսզի հասկանամ, թե ինչ ընթացքում է գործը, ոչ մի բան չեն ասում, կամ էլ տրանսպորտի վարչության պետն ինձ պատասխանում է՝ դեռ բան չենք որոշել՝ դրա ժամանակը չի: Մեր ժամանակն ու հավեսը չունենք, բայց, փաստորեն, դրա արդյունքում անհատ տաքսիստները եւ այլ տաքսի սերվիսներ տուժում են: Ինչո՞ւ են սահմանափակում ուղեւորների ցանկությունը, կարող է ուղեւորն իր նախընտրած սերվիսն ունի եւ ուզում է, որ իրեն իր ուզած մեքենան ծառայություն մատուցի՝ իր ուզած գնով»:

«Առավոտը» այս առնչությամբ դիմեց տրանսպորտի եւ կապի նախարարություն, պարզելու, թե, ի վերջո, երբ է նրանց խնդիրը լուծվելու: Նախարարությունից մեզ պատասխանեցին՝ «Առայժմ ուսումնասիրություններ ու քննարկումներ են գնում»:

Քանի որ այս հարցի վերաբերյալ նաեւ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահն էր խոստումներ տվել, որ խնդիրը կուսումնասիրեն, ուստի հանձնաժողովից էլ փորձեցինք ճշտել, թե ի՞նչ են արել: «Առավոտի» հարցին ի պատասխան՝ հանձնաժողովից հայտնեցին, որ մրցույթի չափանիշների հետ կապված ոչ մի խախտում չեն արձանագրել. օդանավակայանը մենաշնորհային դիրք ունի եւ կարող է իր ուզած չափանիշները սահմանել: Սակայն հաստատեցին, որ մրցույթի հայտարարման առումով կան խախտումներ, բայց դրա վերահսկողության եւ շտկման գործառույթը վերապահված է Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը: Հանձնաժողովն էլ է դիմել քաղավիացիային, սակայն առայժմ որեւէ պատասխան չի ստացել: «Առավոտի» հետ զրույցում այս կառույցից վստահեցրին, որ իրենք հանձնաժողովից ոչ մի նամակ էլ չեն ստացել եւ որ այդ հարցը իրենց հետ կապ չունի:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ



### Պատերազմի վետերաններին լավ նայե՛ք



Պատերազմի եւ աշխատանքի վետերան Ռուբեն Ավետիսյանը դիմում է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, վարչապետ Տիգրան Սարգսյանին եւ ԱԺ նախագահին՝ հորդորելով առանց այդ էլ թվով շատ քիչ մնացած Հայրենական մեծ պատերազմի վետերաններին լավ նայել: Նրա խոսքերով, ինքը 4-5 նման բովանդակության դիմում արդեն ուղարկել է նախագահին, սակայն ոչ մի պատասխան չի ստացել:

«Ափսոսում եմ, որ Հայաստանի Հանրապետությունում տարին մեկ անգամ են հիշում Հայրենական պատերազմի մասնակիցներին: Խնդրում եմ պետական հովանավորությունը 1941-1945թթ. պատերազմում հաղթողների նկատմամբ փոխել, օգնել, հոգատարությամբ վերաբերվել, քչերն են մնացել, չէ որ նրանք հասակն առած 85-90 տարեկան եւ բարձր տարիքի մարդիկ են: Ընդունեք օրենքներ, ինչպես Ռուսաստանի Դաշնությունում եւ մի քանի հանրապետություններում են ընդունել:

Խնդրում ենք նրանց վճարեք խորհրդային տարիներին խնայդրամարկղերում ներդրած ավանդները:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագրով սովետական բանակում ծառայող բոլոր զինվորականներին պարգեւատրել են 1941-1945թթ. պատերազմում հաղթողների մեդալով, ուստի նրանց բոլորին էլ համարել Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ: Ցավալի է, որ այդ հանգամանքն անտեսվել է մեր հանրապետությունում: Այն զինվորականները, որոնք չեն մասնակցել պատերազմին՝ սահմանապահներ, տարբեր պետական եւ ռազմական հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, ռազմաճակատներին սնունդ, ռազմամթերք, հագուստ մատակարարող անձինք են, որոնք չեն համարվում պատերազմի մասնակից:

Խնդրում ենք Հայրենական պատերազմի մասնակիցներին անվճար բուժօգնություն տրամադրել եւ սահմանել անվճար դեղերի ցանկ, ուղեգրել հանգստյան տուն, թեթեւացնել կենցաղային սպասարկումների վարձը»,- ասում է Ռուբեն Ավետիսյանը:

# Հողը մշակելու համար պետական սահման պետք է անցնել

Վրաստանի հետ սահմանակից Դեղձավանում հողերի չափագրումների հետ կապված խախտումները բազմաթիվ են, ինչի պատճառով գյուղացիների միջեւ լարվածություն է: Փետրվարի 7-ին Դեղձավան համայնքի ղեկավար Ռուբիկ Հովհաննիսյանը գյուղ այցելած Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանին ներկայացրեց իրավիճակը.

-Մարդ 20 տարի մշակել է հողը, հիմա քարտեզով պարզվել է, որ դա հարեւանինն է, կարող է դանակահարություն լինել:

Մարզպետն ասաց, թե կադաստրային քարտեզի տակ ստորագրել է նաեւ համայնքի ղեկավարը եւ գյուղապետից հետաքրքրվեց, թե 5-6 տարի առաջ կատարված քարտեզագրման ժամանակ ինչո՞ւ գյուղացիները չեն ճշտել իրենց հողակտորների սահմանները: Գյուղապետը տեղեկացրեց, որ իրենք գյուղապետարանի առաջ մի ամիս շարունակ համապատասխան հայտարարություն էին փակցրել, սակայն գյուղացիներն այդ ժամանակ Բագրատաշենի շուկայում առեւտրով էին զբաղված, հողերի սահմանների ճշտմանը խանգարում է նաեւ այն, որ 90-ական թվականների սկզբին յուրաքանչյուր դեղձավանցի 7-8 տեղ փոքր հողակտորներ է սեփականաշնորհել: Հողերի հետ կապված խնդիր կա ոչ միայն համայնքի ներսում: 50 հա հողատարածք գտնվում է հայ-վրացական սահման հանդիսացող փշալարից այն կողմ: Այդ 50 հեկտարից 45-ը համայնքային նշանակության խոտհարքներ եւ արոտավայրեր են: Մնացած 5 հեկտարը սեփականաշնորհված վարելահող է: Դեղձավանցիները նույնիսկ չեն անում փշալարից այն կողմ գտնվող հողերը մշակել, վախենում են բռնվել վրացի սահմանապահների կողմից եւ խոշոր տուգանքների ենթարկվել: Նման իրավիճակը գոյություն ունի 2007 թվականից: Մարզպետ Ա. Ղուլարյանն ասաց, որ կա փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանի հանձնարարականը՝ փշալարից անդին սեփականաշնորհված հողեր ունեցող դեղձավանցիներին փոխհատուցել՝ տալով գյուղի տարածքում գտնվող այլ հողեր: Գյուղապետն ասաց, որ դեղձավանցիները համաձայն չեն նման ձեւով փոխհատուցմանը, քանի որ փշալարից այն կողմ գտնվող տարածքներն ամենաբերրի հողերն են: Նրանք ակնկալում են այդ հողերի համար պետությունից դրամական փոխհատուցում ստանալ: Ընդհանուր առմամբ՝ այս խնդրի պատճառով տուժում է 18 դեղձավանցի, չօգտագործվող տարածքների համար գումարներ չեն հավաքագրվում տեղական բյուջե: Իսկ փոքր համայնքի բյուջեն դրանց կարիքը շատ ունի: Դեռեւս 1994 թվականից գոյացել են հողի հարկի պարտքեր, որոնք ներկայումս կազմում են 2 միլիոն 902 հազար դրամ:



ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Առավոտ aravot daily
ՈՒՐԲԱԹ 10.02.2012

# Տղայական «ռազբորկա՞», թե՞ հանցագործություն

## Գյումրեցի դպրոցականը դասարանցուն փորձել էր կրակել ինքնաշեն զնդիկավոր հրացանով

Ինչպես տեղեկացրել ենք, նախորդ օրը ռազբորկա էր տեղի ունեցել Գյումրու թիվ 7 կրթօջախի 12-րդ դասարանի երկու տղաների՝ Ա. Հ.-ի եւ Ե. Խ.-ի միջեւ, որն ավարտվել էր բավականին տհաճ պատմությամբ: Մեր աղբյուրների պնդմամբ՝ այդ նույն դպրոցի ջոկատավարի տղան ինքնաշեն զնդիկավոր հրացանով կրակոցներ է արձակել ու վախեցրել համադասարանցուն, իհարկե՝ դպրոցի պատերից դուրս, բակում: Նրանց տարել էին ոստիկանություն, հարցաքննել, ավելին, ինչպես «Առավոտին» փոխանցեցին Շիրակի մարզի դատախազությունից, փաստի առթիվ քրեական գործ է հարուցվել՝ խուլիգանություն կատարելու մեղադրանքով: Այս պահին կատարվում է նախաքննություն՝ պարզելու, թե որն է եղել վիճաբանության պատճառը, արդյոք իրականում զենք օգտագործվե՞լ է, թե՞ ոչ: Մի՞թե մերօրյա աշակերտները զինված են դպրոց հաճախում, եւ ի՞նչ է կատարվել իրականում. ճշտելու համար այցելեցինք դպրոց ու պարզաբանումներ խնդրեցինք դպրոցի տնօրեն Գագիկ Կարապետյանից: Նշենք, որ սա Շիրակի մարզի ամենամեծ եւ հեղինակավոր դպրոցներից մեկն է, գտնվում է քաղաքի կենտրոնում՝ դատարանի շենքի դիմաց: Տնօրենը փոխանցեց, որ ինքը ականատես չի եղել, քանի որ տղաները վիճաբանել են դասերից հետո, դպրոցի շենքից դուրս, իսկ ինքը այս մասին տեղեկացել է ոստիկանությունից: Տնօրենի կարծիքով՝ աղմուկը բարձրացել է այն պատճառով, որ տղաները վիճաբանել են հերթափոխի ժամին՝ 13.30-ի սահմաններում, երբ առաջին հերթի աշակերտները ավարտում են դասերը, երկրորդ հերթի աշակերտությունն է գալիս, մի խոսքով՝ աչքի ընկնող ժամ է, դպրոցի բակը լի է ծնողներով: «Ոստիկանությունը ահազանգ է ստացել, եւ ոստիկանները շատ օպերատիվ, հենց այդ օրը եկել են դպրոց, քննել աշակերտներին, ծնողներին, ուսուցիչներին: Դուրս գալով հետաքննության շահերից, քանի որ իրազեկ էլ չեմ եւ շատ բաներ չեմ կարող ասել, կարող եմ մի բան հաստատ ասել, որ այս աղմուկը ուռճացված է, անհարկի է, չի կարելի հեղինակավոր դպրոցի նկատմամբ այս պահը որպես սեւ PR օգտագործել: Կարծում եմ, որ շատ կարճ ժամանակահատվածում հասարակությունը կիրազեկվի ու կհամոզվի, որ ոչ մի արտառոց դեպք չի եղել, ուղղակի եղել է տղայական խոսակցություն՝ իր հետեւանքներով, եթե հետեւանքները հանցակազմ են պարունակում, ապա հետաքննությունը դա էլ կճշտի»,- մեզ հետ զրույցում ասաց տնօրենը: Նրա փոխանցմամբ՝ ինքն ամեն ինչով աջակցում է հետաքննությանը, քանի որ ամենաշատն է շահագրգռված, որ այս հարցին վերջակետ դրվի: «Իհարկե, շատ տհաճ է, որ կռիվ-վիճաբանություն է եղել, ո՞ր մի դպրոցի տնօրենը կուզենար, մանավանդ մեր դպրոցի պես մեծ հեղինակություն ունեցողը, որը միշտ շշմեցրել է իր հաջողություններով, ոսկե մեդալակիրներով, արտասահմանում սովորող երեխաների թվով, բայց որեւիցե մեկը պաշտպանված չէ նման դեպքերից՝ մանավանդ, որ շատ մեծ աշակերտական համակազմ ունենք»,- փոխանցեց Գագիկ Կարապետյանը: Նա անգամ կատակեց, որ վերջերս ինքն է աչքով տվել իր դպրոցին. մանկավարժական խորհրդի նիստում հպարտորեն հայտարարել է, որ թեեւ իր ղեկավարած կրթօջախը ամենամեծ թվով աշակերտական համակազմն ունի Շիրակի մարզում, սակայն իր մոտ ոչ մի սարսափելի վեճ ու վիճաբանություն, որը կարժանանար հանրության ուշադրությանը, չի գրանցվել: «Լոկալ բաներ լինում են երեխաների մեջ, եթե տանը քույր ու եղբայր են վիճում, դպրոցում տարբեր երեխաներ են սովորում, չեմ ուզում իդեալականացնել դպրոցը, հասարակության պատկերն է դպրոցը, բայց թող անհամեստության մեջ չմեղադրվեմ, եթե ասեմ, որ շատ լավ, նորմալ դպրոց ունենք, կարճ ժամանակահատվածում դպրոցի հեղինակությունը կվերականգնենք, որը վնասվել էր այս դեպքով»,- խոստացավ տնօրենը: Նա թեեւ շեշտում է, որ որեւէ դպրոց ապահովագրված չէ նման տհաճ դեպքերից, այդուհանդերձ փառք էր տալիս Աստծուն, որ որեւիցե մեկը լրջորեն չի վնասվել:

Գագիկ Կարապետյանը նշեց, որ երկու տղաներն էլ նորմալ ընտանիքներից են, մինչեւ այսօր բացասական վարքագիծ չեն դրսեւորել. մեկը պատրաստվում է բժշկական համալսարան դիմել, մյուսը՝ Վազգեն Սարգսյանի ակադեմիա: Պարոն Կարապետյանից հետաքրքրվեցինք՝ դպրոցականները զինվա՞ծ են դպրոց գալիս: «Հետաքննությունը իր խոսքը կասի, բայց գազային ատրճանակ չի եղել տղայի մոտ, զինված դասի չեն եկել, նորից եմ ասում՝ կռիվը դրսում է եղել, բայց եթե հետաքննություն է գնում, թող հետաքննությունը պարզի եւ հաստատ կպարզի, որ գազային ատրճանակ չի եղել»,- վստահեցրեց տնօրենը: Նա կարծում է, որ պատժելը դաստիարակելու լավագույն միջոցը չէ, տղաներն էլ հանցագործներ չեն:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ




# Եթե ծեծկռտուքը չլիներ, դպրոցականը չէ՞ր մահանա

## Դերենիկ Գասպարյանի կյանքի իրավունքը խախտվել է



Համադասարանցիների միջեւ ծագած վիճաբանության հետեւանքով մահացած 10-ամյա Դերենիկ Գասպարյանի իրավահաջորդի ներկայացուցիչ Արայիկ Զալյանը դիմել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով վերացնել ՀՀ ոստիկանության ՔԳՎ Կոտայքի մարզի քննչական բաժնի Չարենցավանի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Ա. Բաղդասարյանի՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումն ու գործը ուղարկել նախաքննության:

10-ամյա երեխան մահացել է 2010 թվականի հունիսի 5-ին, ՀՀ Չարենցավանի թիվ 5 միջնակարգ դպրոցում՝ մաթեմատիկայի քննության ժամանակ:

«Թեեւ նախաքննության մարմինը հիմնավորված է համարել այն, որ Դերենիկին դպրոցում համադասարանցիներ Իշխան եւ Վրեժ Հարությունյանների կողմից ծեծի ենթարկելը անմիջականորեն կապված է նրա մահվան պատճառահետեւանքային կապի հետ, սակայն քրեական գործը հարուցվել է ոչ թե մահվան փաստի առթիվ, այլ ծեծի հատկանիշներով»,- ասում է Արայիկ Զալյանը: Դատաբժշկական փորձաքննության եզրակացությունից պարզվում է, որ Դերենիկ Գասպարյանը մահացել է շնչառական ու սիրտ-անոթային գործունեության սուր խանգարումների զարգացման հետեւանքով, որոնք կարող էին առաջանալ նաեւ հարվածներից: «Փորձագետի եզրակացության համաձայն՝ եթե ծեծկռտուքը չլիներ, Դերենիկ Գասպարյանը չէր մահանա»,- տեղեկացնում է իրավահաջորդի ներկայացուցիչը: Արայիկ Զալյանն ասում է, որ նախաքննության մարմնի կողմից Դերենիկ Գասպարյանի մահվան փաստի առիթով քրեական գործ չհարուցելով՝ խախտվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքը, ինչպես նաեւ կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

«Մի կողմից նախաքննության մարմինն ապացուցված է համարել ծեծի ենթարկվելու փաստը, մյուս կողմից՝ ծեծը որպես մահվան պատճառ, քննության չի առել, ինչը պարտավոր էր անել»,- բացատրում է Արայիկ Զալյանը:

Քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ նախաքննության մարմինը հիմնավորված է համարել այն, որ Դերենիկի՝ դպրոցում մահացած լինելու հանգամանքը չի ենթադրում դպրոցի վարչակազմի պատասխանատվություն: «Դեպքը տեղի է ունեցել պետության կողմից երաշխավորված դպրոցում, որտեղ պայմանագրային փոխհարաբերություններով հստակ սահմանված են երեխաների եւ դպրոցի վարչակազմի իրավունքներն ու պարտականությունները: Երեխաների կյանքի համար պատասխանատվություն կրում է դպրոցի վարչակազմը»,-ասում է Զալյանը: Ըստ նրա՝ դպրոցում տեղի ունեցած պատահարը, որն ավարտվել է անչափահաս Դերենիկ Գասպարյանի մահով, ամբողջությամբ կախված է դպրոցի ադմինիստրացիայի անգործությունից:

«Քննությունը անցկացնելու պահին բուժակը դպրոցում չի եղել, քննիչը պարզել է, որ համատեղության կարգով բուժակը աշխատում է նաեւ այլ դպրոցում եւ այդ օրը զբաղված է եղել ուրիշ դպրոցում: Տվյալ ժամի պատասխանատու ուսուցիչը տեղում չի եղել, անգամ առաջին օգնությունը հավաքարարն է ցույց տվել»,- նշում է նա:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ
Վանաձոր

# Ես ողջ եմ, բայց վանդակի մեջ

Լույս է տեսել ցմահ ազատազրկման դատապարտված, արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավոր Միհեր Ենոքյանի «Ես զրուցում եմ քեզ հետ, մարդ» գիրքը:




16 տարի է, ինչ Միհերը ազատությունից զրկված է: Նրա երկու փախուստների՝ 2004թ. եւ 2009թ., համար ցմահ բանտարկությանը գումարվեց նաեւ 15 տարվա բանտային կալանքը: Միհերն իր անդրանիկ գիրքը նվիրել է մանկաբույժ մորը՝ տիկին Վարդուհուն: Գիրքը վաճառվում է գրախանութներում, արժե 2000 դրամ, եւ ողջ հասույթը նվիրվելու է քաղցկեղով տառապող հայ երեխաներին:

Միհերն իր գրքում անդրադառնում է Հայաստանում ցմահ ազատազրկվածների խնդրին, ազատազրկվածների հոգեվիճակին, ապրումներին, նա, «Ես մեկն եմ Ձեզանից» ասելով, ուզում է յուրաքանչյուրը հասկանա, որ կա զուգահեռ հասարակություն եւ ինքն այդ զուգահեռ հասարակության մի մասնիկն է: Միհերը ինքնակենսագրական գրքի առաջաբանում գրում է. «Ուշադիր նայեք իմ լուսանկարներին. այնտեղ կա մանկություն, պատանեկությունDիսկ դրանից հետո մի մեծ ընդհատում է: Որտեղ են իմ կյանքի ակնթարթները: Մի՞թե չեմ ապրելDիմ նկարները բացակայում են 20 տարեկանից: 35 տարեկան եմ: Ինձ համարում եմ երիտասարդ: Բնավորությամբ ուրախ եւ օպտիմիստ մարդ եմ: Ես ողջ եմ, բայց վանդակի մեջ»: Ապագա բժիշկն իր ընթերցողի հետ անկեղծ է. «20 տարեկան էի: Սովորում էի Բժշկական համալսարանում, ցանկանում էի ապրել: Ես ասացի, որ փորձել եմ փրկել ընկերոջս կյանքը, երբ մյուսը սպանում էր նրան: Բայց նրանք ինձ չէին լսում, աչք էին փակում անգամ փաստերի վրա»:

Գրքում անդրադարձ կա նաեւ 2009թ. փախուստին, երբ Միհերը 32 օր մնաց ազատության մեջ, չկատարելով որեւէ զանցանք: Սակայն, ինչպես նա է գրում. «Մեծերի արդարադատությունն այս անգամ էլ մնաց կույր»:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Հ. Գ. Ի դեպ ցմահ ազատազրկվածներից գրքեր են հրատարակել նաեւ Արմենակ Մնջոյանը, անգամ բանաստեղծությունների գիրք՝ Նաիրի Հունանյանը:

# Ռեժիսորը «ղրողաբ» չէ, թատրոնն էլ՝ արտադրամաս

## ԳԱԿ-ի Փոքր թատրոնի գեղարվեստական ղեկավար Վահան Բադալյանի դիտարկումները՝ Մայր թատրոնի մասին

Սունդուկյանական քառամյա քաոսը վերջապես ավարտվեց, եւ հունվարի 9-ից Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի գլխավոր ռեժիսոր նշանակվեց Տիգրան Գաստարյանը: Այս թեմայի շուրջ զրուցեցինք ԳԱԿ-ի Փոքր թատրոնի գեղարվեստական ղեկավար Վահան Բադալյանի հետ:

- Ձեր կարծիքով՝ ի՞նչ սկզբունքով կատարվեց ընտրությունը, չէ՞ որ մինչ այդ բոլորովին այլ անուններ էին շրջափվում՝ Արմեն Էլբակյան, Վիգեն Չալդրանյան, Արմեն Մազմանյան, այդ թվում՝ նաեւ Ձեր անունը:

- Այդ խոսակցություններն այդպես էլ մնացին խոսակցության մակարդակի: Երեւի թատրոնի տնօրինությունն ընտրեց այն մարդուն, ով տվյալ իրավիճակում ի վիճակի կլիներ ղեկավարելու թատերական խումբը: Առհասարակ ես իմ պատկերացումներն ունեմ թատրոնի կառուցվածքի վերաբերյալ: Վաղուց արդեն ժամանակն է փոխել կառավարման՝ խորհրդային ժամանակներից մնացած, հնացած ու մաշված մոդելը:

- Իսկ Դուք ո՞ւմ էիք տեսնում գլխավոր ռեժիսորի դերում:

- Ոչ ոքի էլ չէի տեսնում, քանի որ, ինչպես ասացի, խնդիրը մենեջմենթի մեջ է: Պարզապես ղեկավարին փոխելով՝ թատրոնն առաջընթաց, միեւնույն է՝ չի ունենա: Իհարկե, կարեւոր է, թե ով է թատրոնի պատասխանատուն, բայց առավել կարեւոր է համակարգի փոփոխությունը: Այն փոփոխությունները, որ կատարվեցին 4 տարի առաջ, թվում էր՝ կբերեն նոր մոդելի գործածմանը, սակայն թատրոնի ղեկավարությունը հարմար գտավ աշխատել հին ձեւով:



- Գեղարվեստական ղեկավարի պաշտոնը փոխարինվեց գլխավոր ռեժիսորի «կոչմամբ»: Կարծում եք՝ սա որեւէ փոփոխություն կբերի՞ համակարգում:

- Բացարձակապես ոչ մի տարբերություն: Առհասարակ, ի՞նչ է նշանակում գլխավոր ռեժիսոր: Թատրոնը բանվորական հիմնարկ չէ, ռեժիսորն էլ «ղրողաբ» չէ:

- Մայր թատրոնի գլխավոր ռեժիսոր եւ հայկական սերիալների «մաֆիոզի». որքանո՞վ են համատեղելի:

- Դա այնպիսի հարց է, որ ես իրավունք չունեմ կարծիք հայտնելու: Դա յուրաքանչյուրի ընտրության հարցն է: Միգուցե Տիգրան Գաստարյանը ժամանակի հետ հրաժարվի նկարահանումներից, քանի որ թատրոնի աշխատանքը հավանաբար շատ ժամանակ կպահանջի իրենից:

- «Ազատ բեմ» ստեղծելու գաղափարը արդյունավե՞տ եք համարում:

- Որպես գաղափար, այո, արդյունավետ էր: Սակայն հարց է, թե դա ինչպես է իրագործվում. մեզ մոտ փոքր-ինչ անհասկանալի էր այդ իրագործումը... «Ազատ բեմը» ենթադրում է մի թատրոն, որտեղ կա գեղարվեստական ղեկավար, ով հրավիրում է ռեժիսորների համագործակցելու, եւ լավ զարգացած տեխնիկական անձնակազմ: Մշտական դերասանական խումբ գոյություն չունի: Ընդհանրապես, աշխարհում կայացած թատերախմբեր մատների վրա կարելի է հաշվել: Մեզ մոտ նոր մոդելը չընդունվեց՝ բնական է, որ մարդիկ, տարիներ շարունակ աշխատելով մի սիստեմի մեջ, թատրոնն ընկալում են որպես իրենց տունը: Բայց փաստ է, որ նման վերաբերմունքը հանգեցնում է թատրոնի ճահճացմանը:

- Իսկ ի՞նչ ելք եք տեսնում:

- Կարծում եմ՝ ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի, եւ ի վերջո ակնհայտ պրոբլեմները կթելադրեն որոշակի փոփոխություններ: Որովհետեւ ճաք տված համակարգով հնարավոր չէ հեռու գնալ: Թատրոնը, ինչքան էլ որ իր մեջ ունի «տուն» հասկացությունը, պետք է այնքան ճկուն լինի, որ կարողանա տուն լինել տարբեր մարդկանց համար: Սա հնարավորություն կտա արվեստագետներին ինքնարտահայտվելու, գուցե նաեւ կստեղծի մրցակցություն, ինչն ավելի լավ արդյունքի կբերի եւ շահեկան կդառնա արվեստի համար:

- Ձեր «Լեգենդ Մակբեթի մասին» եւ մնացած այն ներկայացումները, որ բեմադրվեցին «ազատ բեմի» վրա, կշարունակե՞ն ցուցադրվել:

- Այո՛, համենայնդեպս, Սունդուկյանի ներկայիս ղեկավարությունը այդպիսի ցանկություն հայտնել է:

- Այսքան տարիների ընթացքում տարբեր գեղարվեստական ղեկավարներ է ունեցել Մայր թատրոնը՝ Հրաչյա Ղափլանյան, Խորեն Աբրահամյան, Վահե Շահվերդյան... Ի՞նչ եք կարծում՝ ո՞ւմ օրոք է թատրոնն ամենահաջող շրջափուլն ունեցել:

- Դժվարանում եմ պատասխանել, քանի որ ես չեմ տեսել այնպիսի ժամանակաշրջան, որտեղ Մայր թատրոնն իդեալական վիճակում լիներ: Գուցե մինչեւ 80 թվականները եղել են ժամանակներ, երբ թատրոնը բուռն կյանքով է ապրել, բայց ոչ վերջին տարիներին:

ՍՈՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# Հոգեւոր հացի եւ Աստծուն ձեռնտու լինելու մասին

## Կինովավերագրություն եւ ինտրիգներ՝ ըստ Գագիկ Հարությունյանի

Վերջերս Մոսկվայում ավարտված վավերագրական ֆիլմերի «Ռադոնեժ» 16-րդ միջազգային փառատոնի հեղինակավոր ժյուրին կինովավերագրող Գագիկ Հարությունյանին ճանաչել է լավագույն օպերատոր՝ «Հայկական հաց» նկարի համար (սցենարի հեղինակ՝ Արմեն Գաստարյան): Ժյուրիի աշխատանքները գլխավորել է Վ. Կրուտինը, ընդգրկված են եղել կինոարվեստի ճանաչված այլ դեմքեր՝ Յու. Արաբովը, Ա. Զոլոտուխինը, Տ. Իվենսենը, Վ. Խոտինենկոն եւ ուրիշներ:

Ի՞նչ դիտանկյունից է ֆիլմում ներկայացված հայկական հացը ու, բնականաբար, միայն հացի մատուցման ու ներկայացման խնդիրը չէ, որ հուզել է ֆիլմարտադրողին, գուցե կան նաեւ ենթատեքստե՞ր: «Առավոտը» այս եւ այլ հարցերի պատասխանները լսելու ակնկալիքով հանդիպեց Գ. Հարությունյանին:

Մեր զրուցակիցը նախ նշեց, որ մրցանակը միջազգային ասպարեզում առաջինն է, հետո հայտնեց հետեւյալը. «Մեր ֆիլմում հացը ներկայացվում է որպես հոգեւոր սնունդ: Համառոտ բովանդակությունը սա է՝ ինչպես է հայկական տուֆը «գնում» Մոսկվա ու դառնում հայկական եկեղեցի: Ներկայացվում է նաեւ հնագետը, ով փորձում է պեղումներից գտնված կճուճի վրա վերականգնել բզկտված Հայաստանի քարտեզը: Այդ տաժանակիր աշխատանքում մասնագետին օգնում են մշեցի ծեր կնոջ հիշողությունները»:



Ի վերջո, ո՞րն է հայի հոգեւոր հացը: Արվեստագետն ասաց, որ այդ հացը հողին կառչած արմատներն են, որոնք մեծ ողբերգություն են ապրել ժամանակին՝ Ցեղասպանության, մեր օրերում՝ Արտագաղթի պատճառով...

Հարցին՝ իսկ ե՞րբ ֆիլմը «կմասսայականացվի», կինոօպերատորի պատասխանը հակիրճ էր. «Այն ժամանակ, երբ հայաստանյան TV-ները բարեհաճ կգտնվեն անդրադառնալու հայ վավերագրողների աշխատանքներին»:

Կինոօպերատորի հետ հանդիպման առիթից օգտվելով՝ նրան հիշեցրինք իր «Պատերազմ առանց մեկնաբանության» ֆիլմի՝ 2000-ականների սկզբին հանած աղմուկի մասին, հետաքրքրվեցինք՝ ո՞րն էր պատճառը, գուցե ա՞յն, որ հայ հրամանատարը մա՞յր էր հայհոյել: Կինոօպերատորը նշեց, որ հրամանատարի հայհոյանքը չէր էլ մոնտաժվի, քանի որ «Պատերազմ առանց մեկնաբանության» ֆիլմը հավաքված էր Ղարաբաղյան պատերազմի տեսանյութերից. «Գաղափարը կինոռեժիսոր Կարեն Գեւորգյանինն էր, ով հեղինակն է խորհրդային առաջին ֆիլմի («Խաչմերուկը»), որը 1970-ականների սկզբին Մանհեյմի միջազգային կինոփառատոնում արժանացավ գլխավոր մրցանակի»: Անդրադառնալով «աղմուկին»՝ Գ. Հարությունյանն ասաց, որ ավելի կարեւոր բաներից պետք է խոսել, քան աղմուկներն են: Առանց մանրամասնելու էլ ավելացրեց. «Երբ պատերազմում հաղթում է ժողովուրդը, գտնվում են մարդիկ, ովքեր փորձում են հաղթանակը «սեփականաշնորհել»: Մեր ֆիլմը դա թույլ չի տվել: Այսքանը»:

Կրկին դառնալով «Հայկական հացից» ֆիլմին, օպերատորը մի դրվագ հիշեց. «Մոսկվայից Սանկտ Պետերբուրգ գնալիս «հարեւանս», ով հոգեւոր թերթի գլխավոր խմբագիր էր, դարձավ ինձ, ասելով՝ ընդհանրապես մեր՝ ռուսների տեսանկյունից ձեր հայկական եկեղեցին աղանդավոր է, բայց քանի որ այն գոյություն ունի ոչ թե 100, 500, այլ շուրջ 2000 տարի, նշանակում է, որ Աստծուն դա ձեռնտու է...»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Նա խոսում էր ցածրաձայն

Մենք՝ հայերս, շատ բարձրաձայն ենք խոսում: Թե ողջունելիս, թե ֆուտբոլային թիմը քննարկելիս կռվողների տպավորություն ենք թողնում:

«Ոչինչ»,- կասեք դուք: Թող բարձր խոսենք, թող գոռանք... Ազգային նկարագիր է:

Իհարկե թող... Ուղղակի բանն այն է, որ գոռացողը ոչ միայն դիմացինին է խլացնում, այլեւ՝ ինքն իրեն չի լսում:

Եվ հետո: Ի՞նչ կարելի է արտահայտել գոռալով: Ուրախության ճիչը եւ զայրույթի ճիչը համարյա նույնն են: Գոռացողն ինքնակամ հրաժարվում է բոլոր լեզվի մշակված երանգներից:

Իսկ նա խոսում էր միշտ ցածրաձայն: Դա այնքան անսովոր էր, որ երբեմն նեղվում էիր, քանի որ պետք էր լարվել նրան լսելու համար: Նա այն եզակի անձերից էր, ում հետ լռելը եւս հաճույք էր: Նա վայելում էր լավագույն խոսակցի համբավը, որովհետեւ խոսքի իրավունքը սկզբունքորեն շնորհում էր ուրիշին: Իսկ երբ որոշում էր, այնուամենայնիվ, մի բան ասել, դա մտածված էր, անկեղծ էր, անզուգական էր՝ իր նման էր: Նրա երաժշտական հոգին ազատ արտահայտում էր ապրումն ու միտքը, կասկածն ու պնդումը:

Ազատությունը երեւի իր կյանքի հիմնական իմաստներից էր: Պե՞տք է արդյոք զարմանալ, որ նա խանդավառությամբ նվիրվեց մեր Համազգային շարժմանը, ծառայեց նրան իր խելքով, շնորհներով, գիտելիքներով, իր գրչով...

Մենք ցուցադրեցինք մեր լավագույն հատկանիշները 88-89 թվերին... Մենք ձեռք էինք բերել խոսելու ազատություն, մենք անդադար խոսում էինք միմյանց հետ: Ինչպե՞ս եղավ, որ շատ արագ պարզվեց, որ մենք իրար չենք հասկանում, չենք հարգում, իրար հետ հաշվի չենք նստում, չենք լսում...

Բայց ինչպե՞ս լսենք, եթե մենք՝ հայերս, ախր շատ բարձր ենք խոսում...

ՆԱՏԱԼՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Այսօր ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Էդուարդ Աթայանի 80-ամյակն է (1932-2002):

## Ինչպես հաշվարկել ռիսկերը

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ը եւ «Նախագծերի կառավարման հայկական ասոցիացիան» 2011թվականի հուլիսին հանրապետության տարբեր բուհերի դասախոսների համար նախաձեռնել էին դասընթացներ: Կրթական ծրագիրն արդեն ավարտվել է: Թեստավորման քննությունները հաջողությամբ հանձնած եւ համապատասխան հավաստագրեր ստացածները կարող են այդ հմտությունները փոխանցել կառավարման այբուբենը բացահայտել ցանկացող իրենց ուսանողներին: Գործընթացի արդյունավետության համար լրացուցիչ ձեռնարկ կարող է հանդիսանալ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի հովանավորությամբ հրատարակված «Նախագծերի կառավարման ուղեցույցը»:

«Ռիսկերը հաշվարկելու եւ դրանք նվազեցնելու համար պահանջվում է ճկունություն: Մասնագիտացման ճանապարհին դրանց գումարվում են նաեւ անհրաժեշտ փորձառությունն ու ժամանակը. գործոններ, որոնք միշտ չէ, որ բավարար են լինում ցանկալի արդյունք արձանագրելու համար: Նոր հրատարակված ուղեցույցը հմուտ գործընկերոջ դեր կստանձնի բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են բացահայտել հաջողության հասնելու մոդելը: Գիրք-օգնականի լեզուն հնարավորինս արագ եւ արդյունավետ տիրապետելու հարցում սկսնակներին կաջակցեն համապատասխան դասընթացներ անցած մասնագետները»,- համոզված է «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը: Նախագծերի կառավարման ուղեցույցն ունի հատուկ մոտեցում: Այն առաջարկում է բազային գիտելիքներ:

VIVAcell MTS

# ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Աշխարհի 3 լավագույնները հաստատել են իրենց մասնակցությունը

Ռուսաստանի շախմատային ֆեդերացիան իր պաշտոնական կայքում տեղեկատվություն է տեղադրել այն մասին, որ հաստատվել է աշխարհի ութերորդ չեմպիոն Միխայիլ Տալի ավանդական՝ 7-րդ հուշամրցաշարի անցկացման ժամկետը: Այն կմեկնարկի հունիսի 7-ին եւ եզրագիծը կհատի հունիսի 19-ին:

Արդեն այդ մրցաշարին իրենց մասնակցությունը հաստատել են ՖԻԴԵ-ի վարկանիշային դասակարգման ցուցակի երեք առաջատարները՝ նորվեգացի Մագնուս Կարլսենը, Հայաստանի լավագույն շախմատիստ Լեւոն Արոնյանը եւ ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկը: Մրցաշարի ուժեղագույն խմբի մյուս մասնակիցների անունները եւ անցկացման վայրը հայտնի կդառնա ավելի ուշ:

## Որտե՞ղ կխաղան աշխարհի թագի հավակնորդները

Ինչպես հայտնի է, այդ մրցաշարի հաղթողի գլխավոր հավակնորդ Լեւոն Արոնյանը կտրականապես մերժել է Բաքվի տարբերակը: Այս հարցը շարունակում է մնալ առկախ: Անգամ՝ Միացյալ Արաբական Էմիրությունների Ալ-Աին քաղաքում ավարտված ՖԻԴԵ-ի նախագահական խորհրդի համաժողովի ավարտից հետո:

Լոնդոնի եւ Բաքվի միջեւ իրավունքի համար պայքարում մասնագետները նախապատվությունը տալիս են Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքին: Այս մասին ռուսաստանյան լրատվամիջոցներին տեղեկացրել է միջազգային ֆեդերացիայի Մոսկվայի ներկայացուցչության տնօրեն Բերիկ Բալգաբաեւը: Բայց նաեւ ավելացրել է, թե առայժմ պաշտոնական որոշում գոյություն չունի, քանի որ դեռեւս կազմակերպական բնույթի հարցեր կան: Նրա խոսքերով, ՖԻԴԵ-ի նախագահական խորհուրդը կազմակերպության ղեկավար Կիրսան Իլյումժինովին հանձնարարել է լրամշակել այդ պահերը, վերջնական որոշում կայացնել եւ հրապարակել ոչ ուշ, քան փետրվարի 29-ը:

Նախագահական խորհրդում, սակայն, շախմատի համաշխարհային անցուդարձին առնչվող մի շարք էական վճիռներ են ընդունվել, որոնցից ամենակարեւորը, թերեւս, այն է, որ հաստատվել են այս տարի կայանալիք շախմատի համաշխարհային օլիմպիադայի անցկացման վայրը եւ ժամկետները: Այն կանցկացվի Ստամբուլում՝ օգոստոսի 27-ից սեպտեմբերի 10-ը:

## Գագիկ Հովհաննիսյանը՝ ՖԻԴԵ-ի լրատվամիջոցների հանձնաժողովի նախագահ



ՖԻԴԵ-ն Հայաստանի շախմատային ֆեդերացիայի գլխավոր քարտուղար, «Շախմատային Հայաստան» հանդեսի գլխավոր խմբագիր, սիրող շախմատիստների աշխարհի չեմպիոն Գագիկ Հովհաննիսյանին նշանակել է Շախմատի միջազգային ֆեդերացիայի լրատվության հանձնաժողովի նախագահ-շախմատային լրատվամիջոցների հատուկ ծրագրի ղեկավար: Մինչ այժմ պարոն Հովհաննիսյանը հանձնաժողովի համանախագահն էր՝ շախմատային հայտնի մեկնաբան, իտալացի Լեոնսիո Գարսիայի հետ:

## Ամիրաղյան-Իսաեւա զույգը մտավ կիսաեզրափակիչ

Երեկ Միացյալ Արաբական Էմիրությունների Շարմ էլ Շեյխ քաղաքում ավարտվեց թենիսի $10 հազար ընդհանուր մրցանակային ֆոնդ ունեցող կանանց միջազգային մրցաշարի հերթական մրցափուլը զուգախաղերում: Հայաստանի չեմպիոնուհի եւ թիվ մեկ ռակետ Անի Ամիրաղյանը, որ նախորդ օրը մենախաղերի մեկնարկային հանդիպումից դուրս էր մնացել պայքարից, զուգախաղերում ընկերակցելով ռուսաստանցի Դիանա Իսաեւային, երեկ երկրորդ անգամ հասավ հաջողության՝ 6:4, 1:6 (10:6) հաշվով պարտության մատնելով Չան-Կամաշ երկյակին: Այս հաղթանակով Ամիրաղյանը զուգընկերուհու հետ մտավ կիսաեզրափակիչ:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

## Էդուարդ Լազարեւիչ Նուրալովի հիշատակին



Կյանքից հեռացավ Էդուարդ Լազարեւիչ Նուրալովը... Դա մեծ կորուստ է հայաստանյան գրականագիտական հանրության եւ առաջին հերթին մի քանի սերունդ բրյուսովականների՝ ուսանողների եւ գործընկերների համար:

1951 թվականին Թիֆլիսում դպրոցն ավարտելուց հետո նա եկավ Երեւան, ընդունվեց մեր համալսարան եւ այս ուսումնական հաստատության հետ կապեց իր ողջ կյանքը՝ անցնելով ամբիոնի լաբորանտից մինչեւ ամբիոնի պրոֆեսոր հարգանքի արժանի ճանապարհ եւ դառնալով համալսարանի կենդանի պատմությունը: Տարբեր տարիներ Էդուարդը եղել է ռուս գրականության, գրականագիտության եւ արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, ռուսական բանասիրական ֆակուլտետի դեկան եւ միշտ վայելել է թե ուսանողների եւ թե դասախոսների հարգանքն ու սերը:

Այսօր մենք բոլորս խորը վիշտ ենք ապրում եւ մեզ ինչ-որ չափով որբացած ենք զգում:

Պրոֆեսոր Նուրալովը թողել է գիտական հարուստ ժառանգություն՝ մենագրություններ, դասագրքեր, նրա աշխատություններից շատերը բարձր գնահատականի են արժանացել հայ եւ ռուս գիտական հասարակայնության կողմից: Բազմաթիվ են իր ելույթները միջազգային եւ հանրապետական գիտաժողովներում: Է. Լ. Նուրալովի ներդրումը հայաստանյան գիտության մեջ եւ նրա բեղուն մանկավարժական գործունեությունը արժանացել են բարձր գնահատականի: Նրան մի շարք պատվոգրեր են շնորհվել նախարարության, «Գիտություն» ընկերության, ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության դեսպանության կողմից, իսկ 2005 թվականին՝ Է. Լ. Նուրալովը պարգեւատրվել է հայ մշակույթի, արվեստի, գրականության, կրթության, հումանիտար գիտությունների բնագավառներում ունեցած ստեղծագործական ակնառու նվաճումների համար Հայաստանի Հանրապետության բարձրագույն պարգեւով՝ «Մովսես Խորենացի» շքանշանով:

Գործընկերների եւ երախտապարտ աշակերտների հիշատակում միշտ վառ կմնա Էդուարդ Նուրալովի անմոռանալի կերպարը:

ԵՊԼՀ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմ եւ ուսանողներ

ԺԱՄԱՆՑ

# ԱԺ-ում հնարավոր է՝ աղանդավորնե՞ր հայտնվեն

Ներկայումս Հայաստանում չկան նոր կրոնական կառույցներ: Ինչպես երեկ «Նովոստի» միջազգային մամուլի կենտրոնում նշեց «Քայքայիչ պաշտամունքից տուժածների օգնության եւ վերականգնողական կենտրոնի» նախագահ Ալեքսանդր Ամարյանը, փոխարենը սկսել են ակտիվանալ գործող կրոնական կազմակերպությունները՝ առաջիկա խորհրդարանական ընտրությունների. առիթով: «Աղանդավորական կառույցները ներթարկվում են իրենց հովիվներին, ովքեր արդեն սկսել են վաճառել իրենց հետեւորդների ձայները կուսակցություններին: Մասնավորապես ակտիվ բանակցություններ են տանում խարիզմատիկ՝ «Աստծո դեսպանատուն», «Կյանքի խոսք» եւ «Հավատքի խոսք» եկեղեցիները»,- հայտնեց բանախոսը:

Փորձագետը չբացառեց, որ առաջիկայում Ազգային ժողովում կտեսնենք «Կյանքի խոսքի» ներկայացուցիչներից ոմանց: Ամարյանի խոսքերով՝ պետական կառավարման համակարգում աղանդավորների ներգրավվածություն կար դեռեւս 2004թ.-ից. «Նրանք ամենուր են, նույնիսկ՝ դատարանում: Ժամանակին ներքին գործերի նախարարությունում կար Սոնա Ֆահրադյանը, ով հոգեբան էր: Հավաքվում էին Գաջեգործների 16 հասցեում»:

Ըստ Ամարյանի տվյալների՝ Հայաստանում ներկայումս կա 300-350 հազար ոչ Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ: Ներկայացնելով որոշների գործունեությունը՝ Ալ. Ամարյանը նշեց, որ ի տարբերություն թափանցիկ գործող կաթոլիկ ու ուղղափառ եկեղեցիների՝ քայքայիչ աղանդները փակ են եւ մեծ վտանգ են ներկայացնում՝ քաղաքացիներին հոգեորսությամբ ներքաշելով իրենց կառույց եւ դարձնելով «անգիտակից մարդկատարող»:

Ներկայումս Հայաստանում կա 67 գրանցված կրոնական կազմակերպություն եւ դրա կրկնապատիկի չափով էլ՝ չգրանցված: Դրանց մի մասը գործում է որպես կրթական համալիր կամ հասարակական կազմակերպություն, սակայն երբ պետական մարմինները փորձում են որեւէ բան ճշտել, արգելում են՝ պատճառաբանելով մտքի եւ խղճի ազատության իրավունքի ոտնահարմամբ: Ալ. Ամարյանի խոսքերով՝ աղանդների դեմ պայքարում Հայաստանը ետ է մնում՝ համապատասխան մասնագետներ, մասնավորապես՝ կրոնագետ-իրավաբաններ, կրոնագետ-հոգեբաններ չունենալու պատճառով, ինչի արդյունքում որոշ սպանություններ կամ ինքնասպանություններ որակվում են որպես կենցաղային դրդապատճառ. «Օրինակ՝ 2004թ.-ին 12 տարեկան աղջկա կախվելը, 2003թ.-ին սատանիստների կողմից ոսկերիչի սպանությունը, կամ վերջերս Սեւանում ծնողներին սպանած տղայի դեպքը»:

Բանախոսի խոսքերով՝ քայքայիչ աղանդների գործունեությունը սպառնում է ոչ միայն ազգային անվտանգությանը, այլեւ 1700 տարվա քրիստոնեական պատմություն ունեցող ազգի էությանը:

Աղանդավորական կառույցների ակտիվ գործունեության պատճառ Ալ. Ամարյանը համարեց այն, որ օրենքը մնացել է թղթի վրա:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

# Ճակատագիրը հնարավոր է վերափոխել

Մարդն իր ամբողջ կյանքի ընթացքում փորձել է պարզել, թե ի՞նչ է ճակատագիրը, սակայն միանշանակ պատասխան չի գտել: Ճակատագրի մասին ստեղծվել են իրար հակասող ուսմունքներ: «Ճակատագիրը մեկն է, սակայն այն հնարավոր է փոփոխել՝ կախված նրանից, թե մարդու ծննդյան ժամանակ մոլորակներն ինչ դասավորություն են ունեցել: Մեծ դեր է խաղում նաեւ արտաքին գործոնը՝ մեզ շրջապատող մարդիկ, կյանքը եւ այս բոլորի փոխհարաբերությունները»,- մեզ հետ զրույցում ասաց աստղաբան Արսեն Սոկոլովը: Նրա համոզմամբ՝ բնավորության փոփոխման արդյունքում կարելի է փոխել նաեւ ճակատագիրը:

Աստղահոգեբան Նունե Թորոսյանի խոսքով էլ, մարդը պետք է ճկուն լինի եւ հարմարվի կյանքի յուրաքանչյուր հոսանքին: Նրա կարծիքով, մարդուն պիտակավորելը սխալ է. «Ոչինչ կամ ոչ ոք վատը չէ: Մեզանից է կախված, թե ինչ կստանանք կամ ում կհանդիպենք կյանքի ընթացքում: Եթե ճակատագրով մեկին տրվում է այս կամ այն ուղին՝ նա պետք է անցնի: Իսկ տվյալ անձին հանդիպած մարդն անպայման կունենա բնավորության այն գծերը, որոնք իր մոտ պետք է շտկվեն: Հակառակ դեպքում այդ լուծը կընկնի վերջինի ժառանգների ուսերին՝ էլ ավելի բարդանալով»:

Բնավորությունը փոխելն այդքան էլ հեշտ չէ, սակայն գոյություն ունեն հնդկական եւ չինական մեդիտացիաներ, ուսմունքներ, որոնք կարող են օգնել մարդուն վերափոխվել: Նունե Թորոսյանի համոզմամբ, նման ուսմունքներով կարելի է պարզել նաեւ, թե որքան կլինի մարդու կյանքի տեւողությունը. «Պարզ չէ՝ ինչի՞ց է կախված մարդու կյանքը, ինչի՞ց կարող է նա մահանալ, թեպետ կան աստղաբանական որոշակի ուղղություններ (նաեւ Կարմայական ծրագիր), մաթեմատիկական հաշվարկներ, որոնցով մարդու կյանքի տեւողությունը կարելի է պարզել: Օրինակ՝ երբ որեւէ մեկին տրված է ապրել 75 տարի, բայց 70 տարեկանում ինքնասպան է լինում, մնացած 5 տարին՝ որպես պարտք, պարտադրված է լինում հատուցել հաջորդ կյանքում: Ըստ Կարմայական ծրագրի, մեկ մարդու ճակատագիրը կախված է մյուսի ճակատագրից: Մենք բջջի նման ենք. պետք է ծնվենք, ապրենք, մահանանք, մահանալուց հետո էլ թողնենք որոշակի վիբրացիա, էներգիա, որպեսզի մնացած «բջիջները» չմահանան»,- բացատրեց մասնագետը:

Ըստ Նունե Թորոսյանի՝ հնդիկներն այնքան են խորացրել իրենց գիտելիքները, որ նույնիսկ կարող են որոշել, թե հաջորդ կյանքում երբ է այս կամ այն մարդը ծնվելու: «Ցավոք, Հայաստանում այդպիսի ուսմունք չկա: Դասական աստղաբանությունը այդպիսի հաշվարկներ չի կատարում: Վերջինը, մոլորակների դասավորության օգնությամբ, որոշում է անբարենպաստ պահերի ժամանակն ու տեւողությունը, կամ ինչպես կարելի է դրանցից խուսափել: Փաստորեն, եթե մարդու մակարդակն ինքնաճանաչմամբ բարձրանա՝ նա կսկսի ավելի հանդուրժող լինել կյանքի նկատմամբ եւ շտկել սեփական բնավորության բացասական գծերը: Միայն այդպես կարելի է կյանքին տալ ավելի լավ որակ՝ դաստիարակելով մյուսներին: Սակայն այդ ամենին հասնելու համար պետք է զարգացնել յուրաքանչյուրիս հոգեւոր կողմը»,- շեշտեց աստղահոգեբանը:

ԵԼԵՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ